

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

200_թ.

_____ դեմս _____ գործող
_____ հիման վրա (այսուհետև՝ ՆԵՐԴՐՈՂ), մի կողմից և _____
այլուղացիական փոխօգնության միության
անդամ _____, բնակվող _____
շրջանի _____ գյուղում (այսուհետև՝ ՄԱՍՆԱԿԻՑ) մյուս կողմից, Հայրենադարձության և
հիմնավորման «ԵՐԿԻՐ» հասարակական կազմակերպությունների միության «Երկիր» հիմնադրամ»
ծրագրի շրջանակներում կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմանագրով ՆԵՐԴՐՈՂԸ պարտավորվում է ՄԱՍՆԱԿԻՑԻՆ տրամադրել մանր անասուն և
տնկի հետեւյալ չափով՝ _____ խոզ, _____ թռչուն և
_____ տնկի՝ _____ ընդհանուր արժեքով, իսկ
ՄԱՍՆԱԿԻՑԸ պարտավորվում է ընդունել նշված մանր անասունն ու տնկին և օգտագործել սույն
պայմանագրում նշված նպատակներին հասնելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՆԵՐԴՐՈՂԸ պարտավորվում է.

2.1.1. ՄԱՍՆԱԿԻՑԻՆ մանր անասունն ու տնկին տրամադրել առողջ վիճակում:

2.2 ՄԱՍՆԱԿԻՑԸ պարտավորվում է.

2.2.1. ՆԵՐԴՐՈՂԻ տրամադրած մանր անասունն ու տնկին պահել բարեխիղճ ձևով, ժամանակին
կատարել անասնաբուժական եւ պատվաստման բոլոր միջոցառումները:

2.2.2. Սույն պայմանագրի ժամկետը լրանալուց 1.1. կետում նշված մանր անասունները, տնկիները
կամ դրանց համարժեք այլ անասուններ, կամ նույն կետում նշված գումարը հանձնել
ՆԵՐԴՐՈՂԻՆ:

2.2.3. Պայմանագրի առարկա հանդիսացող մանր անասուններն եւ տնկին պայմանագրի
գործողության ընթացքում գրավ չդնել, չհանձնել այլ կողմի, չվաճառել կամ այլ եղանակով
չօտարել առանց ՆԵՐԴՐՈՂԻ համաձայնության:

2.2.4. ՆԵՐԴՐՈՂԻ պահանջով անմիջապես ներկայացնել պայմանագրի առարկայի հետ
առնչություն ունեցող բոլոր փաստաթղթերը:

2.2.5. Եռամսյակը մեկ անգամ ՆԵՐԴՐՈՂԻՆ ներկայացնել պայմանագրի մասին հաշվետվություն:

2.2.6. Երրորդ կողմի հետ որևէ համաձայնության գալու դեպքում, որը առնչություն կունենա
պայմանագրի առարկայի հետ, հայտնել ՆԵՐԴՐՈՂԻՆ:

2.2.7. Պայմանագրի առարկային վերաբերվող մանր անասուններին և տնկիներին վնաս
սպառնալու և կամ վնասելու դեպքում անհապաղ հայտնել ՆԵՐԴՐՈՂԻՆ, ընդ որում դա չի
ազատում ՄԱՍՆԱԿԻՑԻՆ իր պայմանագրային պարտավորությունների կատարումից,
մասնավորապես 2.2.2. կետով նախատեսված:

2.2.8. Սույն պայմանագրի 2.2.2. կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու
դեպքում շուկայական արժեքով դրամական փոխհատուցում տալ չհանձնված գույքի դիմաց:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1 ՆԵՐԴՐՈՂԸ իրավունք ունի.

3.1.1. Վերահսկել ՄԱՍՆԱԿՑԻ գործողությունները, նաև հրավիրված մասնագետների միջոցով:

3.1.2. Պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած ժամանակ ստուգել կատարվող աշխատանքների ընթացքը:

3.2.ՄԱՍՆԱԿԻՑԸ իրավունք ունի.

3.2.1. Իր պայմանագրային պարտավորություններից դուրս ստացած արտադրանքը տնօրինել իր հայեցողությամբ:

3.2.2. Պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ կատարել պայմանագրի թիվ 2.2.2. կետով ստացված պարտավորությունները (նշված դեպքում պայմանագիրը համարվում է լուծարված):

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Սույն պայմանագրի 2.2.2. կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում ՄԱՍՆԱԿԻՑԸ պատասխանատվություն է կրում իր ունեցած ամբողջ գույքով:

4.2. ՄԱՍՆԱԿԻՑԸ մանր անասունները և տնկիները սահմանված ժամկետում չվերադարձնելու դեպքում ՆԵՐԴՐՈՂԻՆ ՎՃարում է տուգանք յուրաքանչյուր ուշացած օրվա համար չվերադարձված անասունների շուկայական արժեքի 0,1 % - ի չափով:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած վեճերը կարգավորվում են կողմերի բանակցությունների միջոցով, իսկ փոխհամաձայնության չգալու դեպքում՝ գործող օրենսդրության համաձայն:

5.2. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր կողմի մոտ մեկ օրինակ:

5.3. Անասունների հանձնում – ընդունումը կատարվում է համապատասխան ակտերով, որոնք կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում անասունների հանձնման - ընդունման պահից:

6.2. Սույն պայմանագիրը կնքվում է _____ ժամկետով:

6.3. Պայմանագիրը կարող է դադարեցվել.

6.3.1. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6.3.2. Պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում:

6.3.3. Սույն պայմանագրի 3.2.2. կետի համաձայն:

6.3.4. Միակողմանի ՆԵՐԴՐՈՂԻ կողմից, եթե ՄԱՍՆԱԿԻՑԸ խախտել է 2.2.1. կետը, ընդ որում ՄԱՍՆԱԿԻՑԸ պարտավոր է վերականգնել ՆԵՐԴՐՈՂԻ կրած վնասները:

6.4. Պայմանագիրը կարող է երկարացվել կողմերի համաձայնությամբ:

ԿՈՂՄԵՐ

ՆԵՐԴՐՈՂ

ՄԱՍՆԱԿԻՑ

անձնագիր

(հասցե)
